



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ  
ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

10.08.2018թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ**

**ՔՆՆՈՂ ԱՆՁ**

**թիվ ՍՑ-ԷՍ-2018/103**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.07.2018թ. թիվ 03/26-3/12480-18 գրությամբ «Ստարտկոպի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01262714) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

**1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 09.07.2018թ. թիվ 04/31.2/8312-18 գրության հիման վրա, 10.07.2018թ. նախաձեռնել է «Ստարտկոպի» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ)

ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

**2. ՀՀ կրթության և գիտության նախարարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ կրթության և գիտության նախարարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.07.2018թ. թիվ 04/31.2/8312-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2018 թվականի հունիսի 26-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով կազմակերպված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների գնման գործընթացին 22.06.18թ հայտ է ներկայացրել «Ստարտկոպի» ՍՊԸ-ն և 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը, վերջինիս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 27.06.18թ ներկայացվել է համապատասխան հարցում: Հարցման արդյունքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 02.07.2018թ ստացված եզրակացությամբ պարզվել է, որ «Ստարտկոպի» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արմեն Ավետիսյանը:

**3. «Ստարտկոպի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Ստարտկոպի» ՍՊԸ-ն 19.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ստարտկոպի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 22.06.2018թ. մասնակցել է ՀՀ ԿԳՆ կարիքների համար (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.06.2018թ. հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշյալ հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 02.07.2018թ. տրվել է եզրակացություն, համաձայն որի «Ստարտկոպի» ՍՊԸ-ն 22.06.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.07.2018թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հիմքը ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ստացված եզրակացությունը և հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները, «Ստարտկոպի» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով գնահատվել է անբավարար և մերժվել է:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ստարտկոպի» ՍՊԸ-ն 22.06.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 102,085 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ՝ «Ստարտկոպի» ՍՊԸ-ի մոտ 22.06.2018թ. առկա ՀՀ

պետական բյուջեի նկատմամբ 102,085 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունները (101,933 ՀՀ դրամ ապառք՝ շահութահարկի գծով և 152 ՀՀ դրամ տույժ)՝ առաջացել են հետևյալ գործողությունների հետևանքով.

- «Ստարտկոպի» ՍՊԸ-ն 11.06.2018թ. մուտք է կատարել միասնական հաշվին 119,000 ՀՀ դրամ գումար (որպես շահութահարկի գծով կանխավճար, ՖԳՀ թիվ L0000000001653206):

- Նույն օրը՝ 11.06.2018թ. «Ստարտկոպի» ՍՊԸ-ն ներկայացրել է ներմուծման ԱԱՀ (ԵՏՄ) գծով հայտարարագիր, որի հիման վրա առաջացող հարկային պարտավորությունների վճարման ժամկետը, ըստ ՀՀ հարկային օրենսգրքի, մինչև հաջորդ ամսվա ներառյալ 20-ն է, այսինքն տվյալ դեպքում նշված հարկային պարտավորությունը պետք է կատարվեր Ընկերության կողմից մինչև 20.07.2018թ. ներառյալ:

- Սակայն, հարկային մարմինների կողմից ներկայացված հայտարարագրի հիման վրա «Ստարտկոպի» ՍՊԸ-ի կողմից վճարված միասնական հաշվում առկա գերավճարներից (գումարը վճարված էր որպես շահութահարկի կանխավճար) 118,068 (117,297+771) ՀՀ դրամ գումարը, հայտարարագիրը ներկայացնելու օրը՝ 11.06.2018թ., ուղղվել է ներմուծման ԱԱՀ (ԵՏՄ) գծով հարկային պարտավորությունը մարելու համար (ՖԳՀ թիվ L0000000001524268, թիվ L0000000001574771):

- Արդյունքում, «Ստարտկոպի» ՍՊԸ-ի մոտ 22.06.2018թ. դրությամբ առաջացել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 102,085 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 101,933 ՀՀ դրամ ապառք՝ շահութահարկի գծով և 152 ՀՀ դրամ տույժ:

Վերոնշված խնդրի վերաբերյալ Ընկերությունը համապատասխան հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ, որով խնդրել է հաստատել «Ստարտկոպի» ՍՊԸ-ի կողմից միասնական հաշվին մուծված գումարներից հարկային մարմնի կողմից 11.06.2018թ. 118,068 ՀՀ դրամ գումարը ներմուծման ԱՀՀ (ԵՏՄ) գծով հարկային պարտավորությանը մարելուն ուղղելու փաստը:

- Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Ստարտկոպի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԷՍ-2018/103 պաշտոնական ընթացակարգի հիմքերը ուսումնասիրելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ է. Սարգսյանին խնդրում ենք հաշվի առնել նույն փաստական հանգամանքներում ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ. Անանյանի կողմից 21.06.2018թ. կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2018/73 որոշումը:

Մասնավորապես, 21.06.2018թ. կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2018/73 որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ. Անանյանի կողմից արձանագրվել է հետևյալը.

«ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ. Անանյանին ուղղված գրության համաձայն՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի

համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Նույն գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.05.2018թ.տրամադրված եզրակացության՝ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 667 937 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Մինևույն ժամանակ, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, գտնում եմ, որ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-18/183» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ ՀՀ

ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ՝ 01/6.1/32927-18 գրության մեջ մատնանշված պատճառներով, առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն արձանագրվելու իրավիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի վարքագիծը, գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն»:

Վերոնշված փաստերի ուսումնասիրությունից և 21.06.2018թ. կայացրած թիվ ՍՅ-ԱՄ-2018/73 որոշման հետ համադրումից հետևում է, որ 22.06.2018թ. «Ստարտկոպի» ՍՊԸ-ն, գիտակցելով, որ իր միասնական հաշվում ունի վճարված գերավճար (119,000 ՀՀ դրամ), մասնակցել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀԿԳԼԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով կազմակերպված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների գնման գործընթացին, սակայն ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացությամբ պարզվել է, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ Ընկերությունն ունի 102,085 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ (101,933 ՀՀ դրամ ապառք՝ շահութահարկի գծով և 152 ՀՀ դրամ տույժ), մինչդեռ ինչպես նշվել է, Ընկերության ունեցած տեղեկատվության համաձայն՝ վերջինս ունեցել է գերավճար՝ շահութահարկի գծով, ինչը սակայն հարկային մարմնի կողմից 11.06.2018թ. ժամկետից շուտ ուղղվել է ներմուծման ԱԱՀ (ԵՏՄ) գծով հարկային պարտավորությունը մարելու համար:

Փաստորեն, «Ստարտկոպի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՅ-ԷՍ-2018/103 պաշտոնական ընթացակարգում, մեր կարծիքով, առկա են ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ. Անանյանի կողմից 21.06.2018թ. կայացրած թիվ ՍՅ-ԱՄ-2018/73 որոշման հանգամանքները, քանզի տվյալ դեպքում նույնությամբ առկա է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ՝ 01/6.1/32927-18 գրությամբ մատնանշված պատճառները, այսինքն առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն արձանագրվելու իրավիճակը, ուստի «Ստարտկոպի» ՍՊԸ-ն, մեր կարծիքով, «ՀՀԿԳԼԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն»:

Ի լրումն 19.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրության, «Ստարտկոպի» ՍՊԸ-ն 25.07.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն նշվել է, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 02.07.2018թ. տրվել է եզրակացություն, համաձայն որի «Ստարտկոպի» ՍՊԸ-ն 22.06.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ինչպես պարզվել է, «Ստարտկոպի» ՍՊԸ-ն 22.06.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 102,085 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 101,933 ՀՀ դրամ ապառք՝ շահութահարկի գծով և 152 ՀՀ դրամ տույժ:

Անհրաժեշտ է նշել, որ 08.06.2018թ. «Ստարտկոպի» ՍՊԸ-ն իր միասնական հաշվեհամարում ունեցել է 135,771 ՀՀ դրամ գերավճար:

Այնուհետև, «Ստարտկոպի» ՍՊԸ-ն իր միասնական հաշվեհամարը, որտես արդեն իսկ առկա է եղել 135,771 ՀՀ դրամ գերավճար, համալրել է հետևյալ գումարներով (վճարվել են որպես գերավճարներ).

- 11.08.2018թ. – 119,000 ՀՀ դրամ,
- 14.06.2018թ. - 184,000 ՀՀ դրամ,
- 14.06.2018թ. – 432,000 ՀՀ դրամ,
- 14.06.2018թ. – 16,000 ՀՀ դրամ,
- 14.06.2018թ. – 54,000 ՀՀ դրամ:

Արդյունքում, ըստ «Ստարտկոպի» ՍՊԸ-ի ունեցած տեղեկությունների, նրա միասնական հաշվեհամարում պետք է առկա լիներ 940,771 ՀՀ դրամ գերավճար:

ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ Ընկերությունը մինչև 20.06.2018թ. պետք է կատարեր իր հարկային պարտավորությունները՝ ԱԱՀ-ի գծով մայիս ամսվա համար և շահութահարկի կանխավճարի գծով՝ երկրորդ եռամսյակի համար:

ԱԱՀ-ի գծով մայիս ամսվա համար վճարվել է 731,318 ՀՀ դրամ (համապատասխանաբար՝ 17,703 + 119,000 + 432,000 + 162,615 ՀՀ դրամ):



Այսպիսով, ԱԱՀ-ի գծով մայիս ամսվա համար 18.06.2018թ. Ընկերության միասնական հաշվից գանձելու արդյունքում պետք է մնար 209,453 ՀՀ դրամ գերավճար:

Այնուհետև, 20.06.2018թ. վրա է հասել «Ստարտկոպի» ՍՊԸ-ի երկրորդ եռամսյակի համար շահութահարկի կանխավճարի գծով՝ 193,318 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորությունը կատարելը:

Ընկերության միասնական հաշվից շահութահարկի կանխավճարի գծով՝ 193,318 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորությունը կատարելու համար հարկային մարմնի կողմից գանձվել է համապատասխամաբար՝

- 20.06.2018թ.- 54,000 ՀՀ դրամ,
- 20.06.2018թ.- 21,385 ՀՀ դրամ,
- 20.06.2018թ.- 16,000 ՀՀ դրամ:

Այսպիսով, Ընկերության միասնական հաշվից շահութահարկի կանխավճարի գծով հարկային մարմինների կողմից գանձվել է 91,385 ՀՀ դրամ, սակայն պետք է գանձվեր նաև 102,085 ՀՀ դրամ, քան որ շահութահարկի կանխավճարի գծով ընդհանուր գումարը կազմում էր 193,318 ՀՀ դրամ:

Ինչպես արդեն նշվել է՝ ըստ «Ստարտկոպի» ՍՊԸ-ի ունեցած տեղեկությունների, միասնական հաշվին մուտք արած գումարների արդյունքում գերավճարը 20.06.2018թ. դրությամբ պետք է կազմեր 209,453 ՀՀ դրամ, իսկ շահութահարկի գծով վճարվելիք գումարը՝ 193,318 ՀՀ դրամ էր, ինչը լրիվ բավարար էր 2-րդ եռամսյակի համար շահութահարկի կանխավճարի գծով հարկային պարտավորություն կատարելու համար:

Սակայն, հարկային մարմինը Ընկերության միասնական հաշվում առկա կանխավճարների գումարներից 11.09.2018թ. 118,068 ՀՀ դրամ գումարը ուղղել է ներմուծման ԱՀՀ (ԵՏՄ) գծով հարկային պարտավորությունը մարելու համար, մինչդեռ ըստ ՀՀ հարկային օրենսգրքի՝ առաջացող հարկային պարտավորությունների վճարման ժամկետը մինչև հաջորդ ամսվա ներառյալ 20-ն է, այսինքն, տվյալ դեպքում նշված հարկային պարտավորությունը կարող էր կատարվել Ընկերության կողմից մինչև 20.07.2018թ. ներառյալ:

Արդյունքում, «Ստարտկոպի» ՍՊԸ-ի միասնական հաշվում առկա գումարը չի բավարարել շահութահարկի կանխավճարի գծով առկա հարկային պարտավորությունը

վճարելու համար, առկա գերավճարներից գանձվել է ընդամենը 91,385 ՀՀ դրամ, իսկ 101,933 ՀՀ դրամը դարձել ապառք՝ շահութահարկի գծով և 152 ՀՀ դրամ տույժ:

Ելնելով նշված իրավիճակից՝ գտնում ենք, որ առկա է 21.06.2018թ. թիվ ՍՑ-ԱՄ-2018/73 որոշմամբ մատնանշված 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը, ինչի հետևանքով «Ստարտկոպի» ՍՊԸ-ն, մեր կարծիքով, «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել նշված փաստերը, ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ. Անանյանի կողմից 21.06.2018թ. կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2018/73 որոշման հիմնավորումները և «Ստարտկոպի» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը, Արթուր Պարանյանը և Կարեն Պետրոսյանը:

#### **4. ՍՑ-ԷՍ-2018/103 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կողմից 10.07.2018թ. թիվ 03/26-3/12480-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 09.07.2018թ. թիվ 04/31.2/8312-18 գրությունը, «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 26.06.2018թ. նիստի թիվ 2 և

03.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «Ստարտկոպի» ՍՊԸ-ի 19.07.2018թ. և 5.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությունները, «Ստարտկոպի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

ՀՀ կրթության և գիտության նախարարարության կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների գնման նպատակով կազմակերպված «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Ստարտկոպի» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ից 9-րդ չափաբաժինների համար:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 26.06.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 5.1 կետով արձանագրել է «Ստարտկոպի» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ից 9-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները, և նույն արձանագրության 6.1 կետով որոշել է «Ստարտկոպի» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը 27.06.2018թ. հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Կոմիտեի կողմից 02.07.2018թ. տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Ստարտկոպի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 22.06.2018թ., դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 102,085 ՀՀ դրամի չափով հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 03.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետով որոշել է՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ստացված եզրակացությունը և Հանձնաժողովի կողմից

ներկայացված գնահատման թերթիկները՝ «Ստարտկոպի» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խրոհիրդին:

«ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

- 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena\_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine\_sargsyan@taxservice.am, gor\_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ 22.06.2018թ. «Ստարտկոպի» ՍՊԸ-ն՝ վստահ լինելով, որ իր միասնական հաշվին առկա է գերավճար՝

119,000 ՀՀ դրամի չափով, մասնակցության հայտ է ներկայացրել Ընթացակարգին, որից հետո սակայն, ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկատվությամբ պարզվել է, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ Ընկերությունն ունի 102,085 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, մինչդեռ Ընկերության հաշվարկների և ունեցած տեղեկատվության համաձայն՝ վերջինս ունեցել է գերավճար՝ շահութահարկի գծով, ինչը, Ընկերության կողմից անհրազեկ լինելու պայմաններում, հարկային մարմնի կողմից 11.06.2018թ.՝ սահմանված վճարման վերջնաժամկետից վաղ, ուղղվել է ներմուծման ԱՀՀ (ԵՏՄ) գծով հարկային պարտավորության կատարմանը: Ընկերության ներկայացուցչի խոսքով, առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն արձանանգրվելու իրավիճակը, հետևաբար, «Ստարտկոպի» ՍՊԸ-ն, իր կարծիքով, գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն չի խախտել:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 4 բաժնի կողմից «Ստարտկոպի» ՍՊԸ-ին տրված՝ անուղղակի հարկերի վճարման փաստի հաստատման վերաբերյալ ծանուցումը, համաձայն որի՝ Ընկերության կողմից 11.06.2018թ. վճարվել է 118,069 ՀՀ դրամի չափով ԱԱՀ:

- Ընկերության կողմից կատարած՝ file-online.taxservice.am կայքից արտատպում, որտեղից երևում է, որ Ընկերությունը 11.06.2018թ. ներկայացրել է ներմուծման հարկային հայտարարագիր:

- Քաղվածք «Ստարտկոպի» ՍՊԸ-ի հարկերի միասնական հաշվից, որտեղ արտացոլված են Ընկերության կողմից 11.06.2018թ. և 14.06.2018թ. կատարված մուտքագրումները՝ /11.08.2018թ. - 119,000 ՀՀ դրամ, 14.06.2018թ. - 184,000 ՀՀ դրամ, 432,000 ՀՀ դրամ, 14.06.2018թ. - 16,000 ՀՀ դրամ, 54,000 ՀՀ դրամ/:

Ընկերությունը համապատասխան հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ, որով խնդրել է հաստատել «Ստարտկոպի» ՍՊԸ-ի կողմից միասնական հաշվին մուծված գումարներից հարկային մարմնի կողմից 11.06.2018թ. 118,068 ՀՀ դրամ գումարը ներմուծման ԱՀՀ (ԵՏՄ) գծով հարկային պարտավորությանը մարելուն ուղղելու փաստը, ինչպես նաև տեղեկացնել, թե ինչ գումար պետք է վճարվեր ՀՀ պետական բյուջե որպես շահութահարկի երկրորդ եռամսյակի կանխավճար:

«Ստարտկոպի» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրել է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ի պատասխան վերը նշված հարցմանը 08.08.2018թ. թիվ 2091 գրությամբ տրամադրած գրությունը, որով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը տեղեկացրել է Ընկերությանը, որ 11.06.2018թ. Ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով 06.06.2018թ. ԵՏՄ երկրներից կատարված ներմուծման համար ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրով առաջադրված հարկի գումարը կազմել է 118,068 դրամ, և 11.06.2018թ. դրությամբ առաջացած պարտավորությունը մարվել է այդ պահին միասնական հաշվում առկա գումարների հաշվին: Միաժամանակ տեղեկացվել է, որ 20.06.2018թ. դրությամբ 2018թ. 2-րդ եռամսյակի համար հաշվարկվել է 193,318 դրամ շահութահարկի կանխավճար, և տվյալ օրվա դրությամբ միասնական հաշվում առկա 91,385 դրամ գումարի հաշվին մարվել է նշված պարտավորության մի մասը, արդյունքում 22.06.2018թ. դրությամբ ռեզիդենտի շահութահարկի գծով պարտավորությունը կազմում է 102,085 դրամ, որից 101,933 դրամ հարկի գումար, 152 դրամ տույժ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված



բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 78-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմինն վճարվող գումարներ, բացառությամբ նույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված դեպքերի:

Օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 5-րդ մասում նշված հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց հետո հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության: Ընդ որում, այլ հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների, վնասի հատուցման գումարները:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ստարտկոպի» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու հայտը ներկայացնելու օրվա՝ 22.06.2018թ., դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 102,085 ՀՀ դրամի չափով հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից 11.06.2018թ.- 14.06.2018թ. հարկերի միասնական հաշվին որպես գերավճար փոխանցվել է 940,771 ՀՀ դրամ, սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վճարված գումարներից 11.06.2018թ. գանձվել են ըստ հաշվետվությունների ներկայացման հաջորդականության՝ 2018թ. մայիսին կատարված ԵՏՄ ներմուծումների հետևանքով առաջացած հարկերը, ինչի արդյունքում 2-րդ

եռամսյակի շահութահարկի կանխավճարի գումարը 20.06.2018թ. միասնական հաշվից գանձվելուց հետո՝ առաջացել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության շահութահարկի կանխավճարի գծով ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է ոչ վերջինիս գործողությունների կամ անգործության հետևանքով, այլ պայմանավորված է ՀՀ հարկային մարմնի կողմից 2018թ. սկզբից ներդրված միասնական հարկային հաշվի նոր համակարգի աշխատանքի տեխնիկական առանձնահատկություններով: Ուստի, նշված հանգամանքներում ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը չի կարող դիտարկվել որպես մասնակցի կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ստարտկոպի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

### Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2018թ. թիվ 03/26-3/12480-18 գրությամբ «Ստարտկոպի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01262714) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**ՀՀ գնումների հետ կապված**

**բողոքներ քննող անձ՝**



**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**